ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, հեռ. 2-42-26 , nerik.melkonyan@mail.ru

N 1/48
15 մարտ 2019թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտ ամսին կայացրած թիվ 06-Ա, 07-Ա և 08-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ. Խմբագրող՝ Մ. Կարապետյան
Հեռ.՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2019 թվականի N 06-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով <<ՆՈՅԱՆ ԱՅԳԻ>> ՍՊԸ տնօրենի հայտը՝

որոշում եմ

1. <<ՆՈՅԱՆ ԱՅԳԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել տեղադրելու արտաքին գովազդ Ողջաբերդ համայնքի վարչական տարածքում /թույլտվությունը կցվում է/:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20/9 թ. Մարտ 11
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
22, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2019 թվականի N 07-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով՝

որոշում եմ՝

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արտակ Սարգսյանին Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցում գտնվող թիվ 3 հիմնական շինության ներսում 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մինչև 2019 թվականի դեկտեմբերի հունիսի 30-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍՏԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 19 թ. Մարտ 11
գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2019 թվականի N 08-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋԵՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 22-ի N 31-Ա որոշումը՝

որոշում եմ՝

1.Հաստատել՝

1) Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Մինչև 2019 թվականի մարտի 19-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությանը ներկայացնել սույն որոշմամբ հաստատված N1,N2,N3 հավելվածները:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019 թ. մարտի 13

գ.Ողջաբերդ